

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Ա.Աղաբաբյանի
Դ. Սամսոնյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Ա.Հովհաննիսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ`

1. «Ստուգումների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների
մասին, կապված ՀՀ փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի
06.10.2011թ. N 01/21/6383-11 հանձարարականի հետ

/Յու.Մանվելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական
եկամուտների /այդ թվում հողի հարկի և գույքահարկի/ հավաքագրման արդյունքներն
առ 01.10. 2011թ. դրությամբ

/Վ. Մկրտչյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Առանց շինարարական թույլտվության ապօրինի շինարարություն
իրականացրած և (կամ) իրականացնող կառուցապատողների (ապօրինի շինարարություն
իրականացնող) նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների մասին
կապված ՀՀ փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի 17.10.2011թ. N
01/16/6565-11 հանձարարականի հետ

/Ա.Ղահրամանյան – ՀՀ Արմավիրի մարզպետ/

և դրական ազդեցություն կունենա այսուհետ իրականացվելիք ստուգման գործընթացների վրա և ստուգման ենթակա կառույցները և կառույցների ղեկավարները նախապես տեղեկացված կլինեն ստուգման գործընթացին, նրանց զերծ պահելով ստուգող անձանց ավելորդ կամայականություններից: ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց <<Ստուգումների մասին>> ՀՀ օրենքի փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնել իրենց ենթակայության տակ գտնվող բոլոր կառույցներին:

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը, որով ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները, առ 01.10.2011թ-ի դրությամբ /կցվում է/, մասնավորապես նշելով այն համայնքները, որոնց սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները 50 % -ից ցածր է:

✓ Մարզպետը անդրադառնալով վերը նշված համայնքների կողմից ներկայացված տեղեկատվություններին առաձին-առանձին առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ ամենայն պատասխանատվությամբ մոտենալ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին և իրականացնել առավելագույն աշխատանքներ դրանց կատարողականը 100 % -ով ապահովելու համար:

Մարզպետը միաժամանակ շեշտեց, որ առաջիկայում համայնքներում կատարվելիք ներդրումները մեծապես կախված կլինեն սեփական եկամուտների հավաքագրումից:

Մարզպետն անդրադարձավ նաև աշխատավարձերի պարտքերին՝ անընդունելի համարելով դրանց առկայությանը և առաջարկեց առաջիկա ամսում այն ամբողջությամբ մարել:

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը համայնքների ղեկավարներին ներկայացրեց ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 17.10.2011թ. N 01/16/6565-11 հանձնարարականը /կցվում է/ կապված առանց շինարարական թույլտվության ապօրինի շինարարություն իրականացրած և իրականացնող կառուցապատողների /ապօրինի շինարարություն իրականացնող/ նկատմամբ լ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին՝ արձանագրային որոշման հետ:

Մարզպետն առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ մանրամասն ուսումնասիրել վերը նշված փաստաթղթերը, քանի որ համայնքների ղեկավարներն իրենց լիազորությունների շրջանակներում իրականացնում են բազմաթիվ գործառնություններ վերոնշյալի կապակցությամբ և այսուհետ ամենայն պատասխանատվությամբ մոտենալ տվյալ գործընթացին:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը լրացուցիչ անդրադարձավ նաև 2012 թվականի համայնքների բյուջեների կազմման գործընթացին և առաջարկեց համայնքների ղեկավարներին 2012թ. Համայնքների բյուջեների գործընթացը ավարտել մինչև դեկտեմբերի 15-ը, ինչպես նաև առաջարկեց բյուջեում գումարներ նախատեսել հակակարկտային կայանների լիցքավորման, «Հայրենական» թերթի բաժանորդագրման գործընթացին և «Վետերանների մարզային խորհրդին» աջակցելու համար:

Մարզպետը տեղեկատվության կարգով մարզխորհրդի նիստի մասնակիցներին իրազեկեց, որ ՀՀ Արմավիրի մարզում նախատեսվում է նաև նոր հակակարկտային կայանների կառուցում 14 պետական ծրագրով, 8-ը «ՎիվաՍել ՄՏՄ»-ի օգնությամբ, որոնց շնորհիվ մարզը գրեթե 80-85% պաշտպանված կլինի բնության տարերքներից:

Մարզպետը նշեց նաև, որ ՀՀ-ում իրականացվում է մարդահամարի գործընթացը, որի կապակցությամբ առաջարկեց համայնքների ղեկավարներին իրենց լիազորությունների և հնարավորությունների սահմաններում աջակցել և ընդառաջել մարդահամարի գործընթացին՝ այն նորմալ, լիարժեք և առանց խոչընդոտների անցկացնելու համար:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարություններով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը:

Վ.Մկրտչյանը իր հայտարարությամբ ներկայացրեց ՀՀ փոխվարչապետի 17.10.2011թ. N 01/16/6566-11 հանձնարարականը, ըստ որի առաջնորդվելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ /ընդ. 15.11.2005թ./ և ՀՀ կառավարության 26.12.2002թ. թիվ 54 արձանագրության 7-րդ կետերով՝ առաջարկեց համայնքների ղեկավարներին մինչև դեկտեմբերի 1-ը ավարտել ՀՈԱԿ-ների /մանկապարտեզների/ վերակազմավորելու գործընթացը/ հանձնարարականը կցվում է/:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը հանդես եկավ մի շարք հայտարարություններով: Առաջին հայտարարությամբ նա առաջարկեց համայնքների ղեկավարներին ճշգրտել 2-րդ բերքի տակ /խոզանացան/ իրականացված ցանքերը և ամփոփ հաշվետվություններ ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի վիճակագրական ծառայությանը:

2-րդ և 3-րդ հայտարարություններով Ա.Այվազյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին 5-օրյա ժամկետում ՀՀ Արմավիրի մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն իրենց համայնքների գյուղատնտեսական տեխնիկայի և հանրապետություն ներկրվող տոհմային երինջների քանակի հետ կապված պահանջարկը:

Օրակարգային հարցերի քննարկման և հայտարարությունների ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան